



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ**

հոկտեմբերի 2018 թվականի № Ա  
ք. Երևան

**«ՋԵՐՄՈՒԿ ՏՈՒՐԲՈՇԻՆ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒԳԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 9-Ի  
№85Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ՝

ա) ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 9-ի №85Ա որոշմամբ «Ջերմուկ Տուրբոշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է «Ջերմուկ-1» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0537 լիցենզիան (այսուհետ՝ Լիցենզիա), որի պայմանների 6-րդ կետի և 7-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Կայանի հաշվարկային հզորությունը կազմում է 1906 կՎտ, իսկ 7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հաշվարկային ճնշումը կազմում է 41,9 մ:

բ) Ընկերությունը 2018 թվականի օգոստոսի 20-ի գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ հայտնելով, որ բնական ռեսուրսներն ավելի արդյունավետ օգտագործելու նպատակով Կայանի կառուցման ընթացքում նախագծում կատարվել են փոփոխություններ, համաձայն որի նախկինում նախատեսված 1,4 մ տրամագծով մետաղական խողովակաշարի փոխարեն տեղակայվելու է 1,6 մ տրամագծով խողովակաշար, որի արդյունքում Կայանի հաշվարկային ճնշումը 41,9 մ-ից կազմելու է 54,7մ, Կայանի հաշվարկային հզորությունը 1906 կՎտ-ից կազմելու է 2547 կՎտ, իսկ հաշվարկային էլքը մնալու է անփոփոխ: Մինևույն ժամանակ Ընկերությունը ներկայացրել է Կայանի փոփոխված նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով՝ 2012 թվականի օգոստոսի 31-ի տրամադրված շրջակա միջավայրի ազդեցության ԲՓ82 փորձաքննական եզրակացությունը և «ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ

պատասխանատվությամբ ընկերության կողմից 2014 թվականի մայիսի 20-ին տրամադրված տեխնիկական փորձաքննությունը: Ի թիվս այլ փաստաթղթերի, ներկայացվել են նաև Կայանի կառուցված գլխամասային հանգույցի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականները, որոնց ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ կառուցված գլխամասային հանգույցով ծանրաբեռնված հողամասերի նկատմամբ իրավունքները հաստատող փաստաթղթեր առկա չեն եղել Ընկերության լիցենզավորման անհատական գործում, և գլխամասային հանգույցը կառուցվել է էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի տրամադրման հայտով չներկայացված հողամասերում,

զ) գրությամբ թվարկված հանգամանքների վերաբերյալ Լիցենզիայի պայմանների համաձայն Ընկերությունը չի տեղեկացրել Հանձնաժողովին և չի ներկայացրել փորձաքննություններ անցած Կայանի փոփոխված նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով, որի արդյունքում փոփոխվել են Կայանի տեխնիկատնտեսական ցուցանիշները,

դ) Լիցենզիայի պայմանների 6-րդ կետի համաձայն՝ Լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է կառուցել (վերակառուցել, ընդլայնել) 1906 կՎտ հաշվարկային հզորությամբ «Ջերմուկ-1» փոքր հիդրոէլեկտրակայանը, արտադրել էլեկտրական էներգիա (հզորություն) ու այն վաճառել Շուկայի կանոններով,

ե) Լիցենզիայի պայմանների 7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն Կայանի հաշվարկային ճնշումը 41.9 մ է, իսկ 3-րդ ենթակետի համաձայն Կայանի հաշվարկային հզորությունը 1906 կՎտ է,

զ) Լիցենզիայի պայմանների 8-րդ կետի համաձայն՝ Լիցենզիայի գործողության ընթացքում Կայանի տեխնիկատնտեսական ցուցանիշների փոփոխության դեպքում լիցենզավորված անձը դիմում է Հանձնաժողով ներկայացնելով համապատասխան հիմնավորող փաստաթղթեր,

է) Լիցենզիայի պայմանների 34-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովին անմիջապես հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել Լիցենզիայի պայմանների խախտումների,

ը) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 4-րդ կետի համաձայն՝ երաշխիքով սահմանված գումարի հաշվարկման բազա է

սահմանվում «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բազային տուրքի չափը: Երաշխիքով սահմանված գումարի մեծությունը պետք է հավասար լինի կառուցվող կայանի հաշվարկային հզորության (արտահայտված կիլովատտերով) և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բազային տուրքի երկուսուկեսապատիկի արտադրյալին, սակայն ոչ պակաս, քան հինգ հարյուր հազար դրամը,

թ) Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 8-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե՝ Հանձնաժողովը որոշում է ընդունել լիցենզավորված անձի լիցենզիայով սահմանված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածը երկարաձգելու մասին,

ժ) Հանձնաժողովը 2018 թվականի սեպտեմբերի 3-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Լիցենզիայի պայմանների 6-րդ, 7-րդ, 8-րդ և 34-րդ կետերի պահանջների և Կարգի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով,

ժա) Հանձնաժողովը 2018 թվականի սեպտեմբերի 3-ի ՄՍ/2.3-56/815-18 գրությամբ հարուցված վարչական վարույթի շրջանակում փոխօգնություն ստանալու նպատակով դիմել է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն (այսուհետ՝ Նախարարություն)՝ խնդրելով հայտնել, թե արդյոք այդ հողամասերի վրա գլխամասային հանգույցի կառուցումը հանգեցրել է Ընկերության ջրօգտագործման թույլտվության պայմանների, մասնավորապես ջրառի կետի խախտման,

ժբ) Նախարարությունը 2018 թվականի սեպտեմբերի 13-ի №3/18.1/30553-18 գրությամբ հայտնել է, որ Ընկերությանը 2007 թվականի մարտի 16-ին տրված №1348 ջրօգտագործման թույլտվության մեջ բացակայում են կոորդինատական կետերը և Նախարարության աշխատակիցների կողմից որոշվել են Կայանի կոորդինատական կետերը: Նախարարության գրությամբ խախտման վերաբերյալ նշում առկա չէ, իսկ Կայանի ջրառի կետի բարձրությունը համապատասխանում է փոփոխված նախագծում նշվածի հետ,

ժգ) հարուցված վարչական վարույթի շրջանակում 2018 թվականի սեպտեմբերի 4-ի գրությամբ Ընկերությունն ըստ էության ընդունել է խախտումները, հայտնելով որ ձգձգվող շինարարական աշխատանքներն ավարտին հասցնելու և ինքնակամ կառուցված գլխամասային հանգույցով ծանրաբեռնված հողամասի նպատակային նշանակության փոփոխման աշխատանքներով զբաղված լինելու պատճառով Ընկերությունը Հանձնաժողովին չի տեղեկացրել ի հայտ եկած հանգամանքների վերաբերյալ, ինչպես նաև

չի ներկայացրել հիմնավորող փաստաթղթերը: Ընկերությունը նշել է նաև, որ դեռևս 2012 թվականին իրականացվել է փոփոխված նախագծի բնապահպանական փորձաքննության, իսկ գլխամասային հանգույցի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը մերժվել է, քանի որ գլխամասային հանգույցով ծանրաբեռնված հողամասի նպատակային նշանակությունը անտառային է, որի փոփոխությունը տևել է մեկ ու կես տարի,

ժդ) իրականացված վարչական վարույթի շրջանակում սույն թվականի սեպտեմբերի 6-ին Կայանում իրականացվել է մոնիթորինգ, որի արդյունքում պարզվել է, որ Կայանը կառուցվել է համաձայն փոփոխված նախագծի, մասնավորապես՝ արդեն իսկ տեղակայված է 1.6 մ տրամագծով խողովակաշար, իսկ փաստացի տեղակայված հզորությունը կազմում է 2700 կՎտ, որը բավարար է Կայանը շահագործել 2547 կՎտ հաշվարկային հզորությամբ, ինչի վերաբերյալ Ընկերությունը նախապես չի տեղեկացրել Հանձնաժողովին,

ժե) վարույթի շրջանակում պարզվել է, որ դրական եզրակացություններով համալիր փորձաքննություն անցած Կայանի կառուցման նախագծային փոփոխությունները առկա են եղել դեռևս 2014 թվականի մայիսի 20-ից, և համաձայն այդ նախագծի փոփոխվել են Կայանի տեխնիկատնտեսական ցուցանիշները՝ այդ թվում Կայանի հաշվարկային հզորությունը և հաշվարկային ճնշումը: Ընկերությունը անմիջապես չի տեղեկացրել և չի ներկայացրել այդ փաստաթղթերը Հանձնաժողով՝ խախտելով Լիցենզիայի պայմանների 6-րդ, 7-րդ, 8-րդ և 34-րդ կետերը: Փաստաթղթերը չներկայացնելու արդյունքում Հանձնաժողովը փոփոխություն չի կատարել Լիցենզիայի պայմաններում՝ հաշվարկային հզորությունը համապատասխանեցնելով փոփոխված նախագծով ամրագրված հզորությանը, ինչի հետևանքով 2014 թվականի մայիս ամսից հետո սխալ է հաշվարկվել Ընկերության լիցենզավորման գործում առկա Լիցենզիայի կառուցման ժամանակահատվածի համար պահանջվող երաշխիքի մեծությունը, այդ կերպ խախտելով Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 4-րդ կետը: Երաշխիքի մեծությունը Կարգով պահանջվող մեծությունից պակաս է եղել մեկ միլիոն վեց հարյուր երկու հազար հինգ հարյուր դրամով, քանի որ հաշվարկային հզորությունը 1906 կՎտ-ի փոխարեն համաձայն փոփոխված նախագծի կազմել է 2547 կՎտ: Լիցենզիայի կառուցման ժամանակահատվածը երեք անգամ՝ Հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 13-ի №77Ս, 2017 թվականի ապրիլի 19-ի №140Ս և 2018 թվականի ապրիլի 18-ի №124Ս որոշումներով երկարաձգվել է, ինչի արդյունքում յուրաքանչյուր անգամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պակաս է փոխանցվել ութ հարյուր մեկ հազար երկու հարյուր հիսուն դրամ, որը ընդհանուր երեք անգամ

երկարաձգելու արդյունքում կազմել է երկու միլիոն չորս հարյուր երեք հազար յոթ հարյուր հիսուն դրամ, խախտելով Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 8-րդ կետի 1-ին ենթակետը:

Ընկերությունը անմիջապես չի հայտնել նաև գլխամասային հանգույցը էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի տրամադրման հայտով ներկայացվածից տարբերվող այլ հողամասերում ինքնակամ կառուցելու հանգամանքի վերաբերյալ: Միաժամանակ, քանի որ Կայանի գլխամասային հանգույցի կառուցումը չի հանգեցրել Ընկերության ջրօգտագործման թույլտվության պայմանների խախտման, Հանձնաժողովի կողմից նոր ջրօգտագործման թույլտվություն չի պահանջվել:

Ժգ) վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Լիցենզիայի պայմանների 6-րդ, 7-րդ, 8-րդ, 34-րդ կետերն ու Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 4-րդ կետի և 8-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետը, 30-րդ հոդվածի 1-ին կետը, 42-րդ հոդվածի 1-ին և 11-րդ մասերը և Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 4-րդ և 8-րդ կետերը՝ Հանձնաժողովը որոշում է.

1. Լիցենզիայի պայմանների 6-րդ, 7-րդ, 8-րդ և 34-րդ կետերի խախտման համար Ընկերության նկատմամբ կիրառել տուգանք մեկ միլիոն դրամ գումարի չափով:
2. Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 4-րդ կետի և 8-րդ կետի 1-ին ենթակետի խախտման արդյունքում պակաս փոխանցված երկու միլիոն չորս հարյուր երեք հազար յոթ հարյուր հիսուն դրամ գումարը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:
3. Լիցենզիայի պայմանների 6-րդ կետում և 7-րդ կետի 3-րդ ենթակետում «1906» թիվը փոխարինել «2547» թվով, իսկ 7-րդ կետի 2-րդ ենթակետում «41.9» թիվը՝ «54.7» թվով:
4. Ընկերությանը սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկշաբաթյա ժամկետում՝

- 1) որոշման 1-ին կետով նախատեսված գումարը 900005242327 հաշվեհամարով և 2-րդ կետով նախատեսված գումարը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
- 2) Հանձնաժողով ներկայացնել ևս մեկ միլիոն վեց հարյուր երկու հազար հինգ հարյուր դրամ գումարի երաշխիք՝ մինչև 2018 թվականի դեկտեմբերի 4-ը գործողության ժամկետով:
5. Ընկերությանը ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումը բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանը օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝**

**Մ. ՍՈՂՈՍՈՆՅԱՆ**

ք. Երևան  
հոկտեմբերի 2018թ.